

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԳՐԱԿԸ
ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԶԱՐՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՍԻՐԵՅՅԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՒՄ ԵՒ
ՀԱՐԱԶՍՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻՆՄԵՆ
ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱԶԱՐԵԱՆԻ
ՈՐ Ի ՊՐԻՒՔՍԵԼ ՊԵԼՃԻՔԱ**

Անհուն ուրախութեամբ իմացանք Արևմտեան Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ և Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիտ արքեպիսկոպոս Նազաչեանէն՝ Ձեր նուիրեալ և անսակարկ ծառայութեանց մասին հանդէպ Հայ Առաքելական Ս. Եկեղեցու, յատկապէս Պելճիքայի հողի վրայ:

Փառք կուտանք Ամենակալին Աստուծոյ, որ մեր ժողովուրդին մէջ անպակաս լըրած է ծառայասէր ու եկեղեցամուէր անձերու ներկայութիւնը:

Իբրև Պրիքսէլի Եկեղեցոյ Հոգաբարձութեան ատենապետ Ձեր կարելին առաւելով լըրած էք մեր Եկեղեցոյ պայծառութեան և անասանութեան համար՝ միշտ աչքի լոյսի պէս պահելով հաւատարմութեան զգացումները մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ:

Մենք մեծապէս կը գնահատենք Ձեր քազմաբեղուն ծառայութիւնները և այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք մեր բոլորի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ 2 քանշանը:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջ և երկար կեանք, որպէսզի շարունակէք Ձեր սպասն ընծայել ազգին և արժանիօրէն վայելէք Ձեր անձնուէր զոհողութեանց բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւետ օրինեալ ի Մենջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25 Մայիսի
Յամի Տեառն 1999 և ի թուին Հայոց ՌՆԽԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/239